

ՄԱՍԻՍ

Շ Ա Ւ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

55րդ ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

թիվ 22

12 ՕԳՈՍՏՈՍ 1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիծեն շեղած	ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
Հանճարն լանճեանս (Գերբուած Լամարգիքի.—Թարգմ.) .	Մ.—
Նրազանքիս մեջ (Բմայֆ)	ԽՈՍՐՈՎ ՔԵՇԵՆՆԱՆ
Տիվին Պօ'քան (Հոգեբանական պատմութիւն.—Թարգմ.) .	ՀՐ. Տ. ՆԱԶԱՐԵԱՆ
Աստուածամայր (Բանաստեղծութիւն)	ՄԻՍԱԲ ՄԵՇԱՐԵՆՅ
Այգեգործական (Վերջին մաս)	Ն. Գ. ԳԱԼՅԱՆՆ
Ներսէնիացում (Բանաստեղծութիւն)	Մ. Ա. ՊԱՐՅԱՄԵԱՆ

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

ՄԱՍԻՍ Շաբաթաբերօքի տարեկան բաժանորդագրիցն է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դրո. եւ գաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 ֆրանք կամ 5 բուլլի: Թղթատարական ծախքը տարբերութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ անոտ:

Ձի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍի մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայմաններով:

Ձեռն-Բէ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՆՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غنیه سى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ԱՐԲԱՆԱՄ Կ. ԿՏԱԻՃԵԱՆ

Ի Զ Մ Ի Տ

Կրօնագրեր

Հրդեհի եւ ծովին ապականութիւններ՝ շահուէտ պայմաններով։
Ամէն տեսակ քոմիտիօնի գործեր, ներածում, արածում եւ մաքսային գործողութիւններ։
Ներապահան աւանդակաւ գործարաններու միջոցով՝ գումար եւ պարզ պատկեր
գործը քաւթ—բաւթունքի պատրաստութիւն, Յօրովրափի կամեմատ։

Կր հայրայրի

«Թումա Սթիմա» Անգլ. Տան դրամադուրներէն։

Սաքսոնիա, աւանդակաւ բիանցներ՝ շաքարեղան վճարումներով։

Ամենակերպիւն դրութեամբ պիտի լինեն։

Ամէն տեսակ երկրագործական եւ թիթեղագործի մեքենաներ։

Ուղում լոյսնակութեամբ եւ տեսակով ընտիր եւ կոտորէտ թէյեր։

Գումարային լոյսնակութիւններ փութով կը կատարուին։

10—107

Հասցէ՝

ԱՐԲԱՆԱՄ Կ. ԿՏԱԻՃԵԱՆ Իզմիտ

Գործարարական թիվ

Թեյը, որ այսօր գրեթե բոլոր ժողովրդաց գլխավոր ըմպելին դարձած է, ա՛յնքան բաղձաթիւ տեսակներ ունի որ, արդարեւ գործածողներուն համար բաւական դժուար է լաւ ընտրութիւն մը ընել: Այդ տեսակներէն մասնք նշանաւոր են իբր ախորժակամ եւ քողցրաբար, մասնք ալ թէեւ նոյնքան ախորժակի համ ու համ չունին, քերազանց են սակայն իբր կաշ-դարիչ եւ զօրացուցիչ. վերջապէս իւրաքանչիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն ունի որոնք զինքը կը զանազանեն ուրիշ տեսակներէ:



Սակայն կալ թէյ մը, որ այդ յատկութեանց ամէնէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համ, համ եւ մանաւանդ կաշ-դարիչ եւ զօրացուցիչ անզուգական ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ճաքոն-ցի քէյը, որ այդ յատկու-

թեանց շնորհիւ կը յարմարի մէն տարի-քի ու կազմութեան, ամէն կլիմայի եւ եղանակի եւ ամէն ճաշակի:

Յաճկութեամբ եւ խազուկեամբ քէյի մեծ վաճառատունը, իր բաղձաթիւ յաճախողաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է հաբանական զուտ թէյ մասնաւոր եւ քեղեցիկ աւափերով ու կը հրաւիրէ օգտուել այս առիթէն բոլոր անոնք, որ կը փոփոքին ունենալ թէյ մը

Համով, հոտով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատուն մէջ կան նաեւ հնդկական, չինական, Սեյլան եւ ծովային ման-նալա տեսակ թէյեր:

Ուսանողութիւն մարգարի

ALA BRODEUSE AU FIL D'OR



MARQUE DÉPOSÉE
FONDÉE EN 1888

ԱՐԹԱՔԻ Ա. ԽՈՒՄԱՐԵԱՆ
(Ա Ս Ե Ղ Ն Ա Գ Ո Ր Ծ)

Մեծ Շուկայ. Գալփագերարտ Նուրի Օսմանի
Թիւ 5 եւ 11

Այս գոյգ մը մեծ վաճառատուն մէջ կը գտնուի ճիշդ մթերք մը ամէն տեսակ տեղեւորութեան եւ արդուզարդի վերաբերեալ նիւթերու, վերջին նորաձեւութեան համաձայն: Այնչեւեւ կը հմայուի տեսնելով Բարիդի աւաղնակաբաք ֆապրիքներու ապրանքներ, գոռաօնէ, ֆաբլէ, չիկիլ. վաճառատն գլխաւոր ապրանքն նիւթը եզոզ D. M. C. նիւզ մեծաք. ու քօթօն, ֆիշիւր, ֆանէլայի, գորգի եւ գանգալի բուրդեր, կլապան, սըրմա, փուլ եւ Թրթր եւալլէ. ինչպէս նաեւ աթլազ, Թա-իլ, եւ ասոնց վրայ հաստատած ճաշակաւոր տեղեւորութիւններ, մեծ ու փոք. ծաւալով:

ՕժիՏԻ համար կ'ընդունուին ամէն տեսակ յաճախարարութիւններ նորատեսակ տեղեւորութեանց, ԲԱՌԵԻԻՄԻՌԻԻ ճիւղէն զուտ, այն ետեւ վաճառատունները կը հալթայթեն նաեւ ԹԻՅԹՍ ՏԱՅՄԸՆՏ ծանօթ վաճառատն ապրանքներէն գտնուելէն ետեւ յանգէններ եւ արդուզարդեւորիչ աւարկաններ, իրականին յարեւմտեան:

Անտեղեւորութեան եւ պաշտօնի մեծ ճիւղերուն մասնագէտ գծագրի մը միշտ պատրաստ կը գտնուի: Վարժարանաց քընտրանքներուն համար մասնաւոր զեղք կ'ընել, ինչպէս արդէն բոլոր գիւղերը դիւրամաս-նիւթ են:

ԺԻՒՐԱԿԱՆ ԱԽՏԻ ԴԷՄ ՆԱԽԱԶԳՈՒՂՈՒԹՅՈՒՆ

Ծիրակաւն ախտի դէմ նախազգուշութեան միայն ճամբայ մը կայ. այն է մարմինը փշա կենսական զօրութեամբ պահել որնոր դրութեան կենսական զօրութիւնն, առողջութիւնն և դիմացողան ոյժ տալով կրնայ բլլալ:



Հիշերու վրայ ասոր ուշա-
գրութիւնն ընել պէտք է:

SCOTT'S EMULSION

աշխարհիս մէջ ամենալաւ «ուտելիք—դեղ» է. որ շուտմը առողջութիւնը կը վերականգնէ և երակներու մէջ նոր հարուստ արիւն կը տարածէ:

Եթէ կաղմութիւնը կատարեալ առողջութեան մէջ չէ և բարակցաւ առաջին նշանները երեան կ'ըլլեն. ինչպէս՝ տեղա-
կան գունատութիւն, թեթեւակայն թելաթար հազ, գիշերները սաստկացող բարեխառնութիւն և անորոշ կորուստ ևն, ժամանակ վատնելու չէ, մէկէն Բսգօթի Բաղադրութիւնն առնելու է. միակ դեղն է որ կրնայ մարդս առողջութեան և զօրութեան վերականգնել և այս եղբրութիւնը գործնականա-
պէս կը տեսնուի վասնզի հազարաւորներ տեսած են և կը տեսնեն:

ԸՍԳՕԹԻ ԲԱԳԼԴՐՈՒԹՅՈՒՆ

կատարելապէս անուշահամ է, անորոշ կենդանացունէ, և մարտողութիւնը կ'աճապարէ. Հիւանդութեան սերմը կը մեղցնէ և շուտմը մարմինը կը զաւայէ: Բսգօթի Բաղադրութիւնն ընդմիջ այս տեսնուած նշանով վարդազոյն փաթեթի մը մէջ կը գտնուի:

Բայց դեղագործները և բժշակները չեն ծախէն:

ԳԻՇԵՐՈՅԻԿ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՈՒՅ ԿԵՍԱՐԻՈՅ

Հաստատեալ 1888 Մայիս 1

Վարժարանիս 20 դ. տարեշրջանն է լուսաջիւղ սեպտ. 1ին: Դասերը պիտի սկսին սեպտ. 4 Բշ. օրը:

Վարժարանիս մէջ զաւա առնալին կրթութեան հետ կ'աւանդուին. — Օսմ. հայ. ֆրանս. եւ անգլ. լեզուները, բնական և չափազան և ալ գիտութիւնք եւ ուսմանք. ընդարձակ. գործնական եւ խնամքով: Վաճառահանձնան սկզբ բանք եւ համառակութեան դասերուն մեծ կարեւորութիւն պիտի արժի լուսա ջիւղաւ շրջանին մէջ:

Ուսանողի մը տարեկան թաւանն է տասներկու օսմ. աւիթ. արուսն է՝ երկուսիս եւ միւսն է՝ երեք լուսնուարի մէջ նախքան հոկտեմբերի կը գտնուին: Մէկ տեղամի համար դպրոցական մասնաճի գրամ կ'աւանդուի կէս օսմ. աւիթ:

Վարժարանն ունի իրեն յատուկ վեր-
կայեալ բժիշկը՝ որ ամէն օր ժամ մը կ'այցելէ եւ կ'աւանդէ նաեւ առաջնա-
պահական դասեր:

Ուսանողին գրեական եւ դասական պիտանքներուն, ճերմակեղէնի լուսցման, ռափսուելու. բժիշկի եւ դեղագործի ամէն ծախքերը վաճարանէս կը հաշուարին, բայց զգեստեղէնի, հագուստի, ճերմակեղէնի եւ ալ ամէն ծախքի-ը իրեն կը վերաբերին:

Չ.ի. կիւսագրայ. եւ նախ իսկ ամե-
նափայտ պահաւ թաւանով ուսանող առ-
այժմ ամենեւին լընդունուին: Ընդուն-
ուելու համար եղած ամէն առաջնակա-
թիւներ երեսը նկատի չեն առնուիր եւ
իւրաքանչեւ տեղաւորուած կը մնան:

Առաջնորդ — Վանահայր
ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՆԵԱՆ

Կեսարիա, 24 յուլիս 1906 2-7

ՄԱՍԻՆ

55^{րդ} ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 22

12 ՕԳՈՍՏՈՍ 1906

ԳԻԾ ԵՆ ԹԵՂԱԾ

(ԽՄԲԱԳՐԱԿԱՆ)

Հայ լրագրութիւնը քիչ անգամ հիւրընկալած է իր էջերուն մէջ, որ և է բանավէճի առթիւ, յօդուած մը՝ այնքան բիրտ որակումներով, այնքան նախատալից բացատրութիւններով լեցուն և հետեւաբար գրեթէ հայհոյական՝ որքան Իզմիրի շաբաթաթերթին օգոստոս 2ի թիւը որուն «Հուսկ բանք»ը գլուխ — գործոց մըն էր՝ իր պաղարիւնը կորսնցուցած զաւելտագրի մը ձափըռտուքներուն։ Այլ գրուածքին, եւ անոր յաջորդող «անձնական նամակներ»ու հրապարակումին ընկերացող նոթերուն պատասխանելը ստորնութիւն մը պիտի ըլլար՝ որուն չենք զիջանիւր։ Երբեմնի Բրիզանթէմը կըրնայ իր երեւակայածին չափ սրամտութիւն ունենալ, փոյթ չէ թէ յաճախ ցեխի մէջ թաթխուած, ու գործածել զայն պատուաւոր անձնաւորութեան մը եւ համեստ հրապարակագրի մը դէմ, զայրոյթի վայրկեանի մը մէջ, — որովհետեւ այդ անձնաւորութիւնը, Բարիդ այցելելուն, լսած էր իր ոչ նուազ պատուաւոր բարեկամներէն սա տեսակ խօսք մը զոր հրապարակելու յանդէնութիւնը կուտենար. — «Եթէ այդ Բրիզանթէմին ի՛նչ տեսակ արարած ըլլաւ իմանալիք, իր անունը անգամ բերանիդ չէիք առնել ո՛չ ալ գորիչնուդ ծայրը»։ Եւ որովհետեւ, միւս կողմէ, այդ հրապարակագիրը պահ մը հիւրընկալելէ ետք իր քրոնիկները, ուշաբերում մը ունենալով եւ յարգել ուղելով հետզհետէ շնորհող հանրային կարծիքը ու պարկեշտ մարդոց ամօթխած զգացումները, օրին մէկը

մերժած էր զանոնք ու անոնց հեղինակին «երթա» բարով» ըսած։

Պ. Արթին Ալփիարի ներկացուցած գրչի զաւելտը, Իզմիրի շաբաթաթերթին թուղթէ բնմին վրայ, կը թողու մեր վրայ տպաւորութիւնը միմոսի մը խեղկատակութեան որ արարուածին տեւողութեանը չափ միայն զօսանք կ'ազդէ, յաջորդ ժամուն մոռցուելու համար։ Ան պիտի գտնէ դեռ, տարակոյս չկայ, հանդիսականներու քիչ չատ ստուար թիւ մը, զուարճանալու համար միայն զինքը մտիկ ընելու, — կարդալու, — գացած, որոնցմէ ոմանք թերեւս ծափահարեն իսկ մեքենական շարժումով մը, մինչ ուրիշներ գլուխին կը դարձնեն պժգանքով։ Այսքան գոհացում մը գտնելու արժանի է անուշտ մէկը որ իր նիւթերը կը քաղէ Fin de siècleի պէս թերթերէ եւ իր գրականութիւնը կը ծաղկեցնէ... Իզմիրի յոյս սպասուհիներու քղանքներուն ֆրոֆրոններուն ներշնչումով։

Բարի՛ վայելում՝ զինքը ըմբռնել ու գողներուն։

Եւ սակայն, տարբեր բան է ընդդիմախօսի մը պատասխանելու չզիջանիլը ու տարբեր բան՝ գծէն շեղած վիճաբանութիւն մը իր նախնական սահմանին մէջ բերել տեղաւորելը, ընթերցող հասարակութեան աչքին փչուած փոշին փարատելու համար, ինչպէս արեւու զօրաւոր ճառագայթներ կը ցրուեն մշուշը որ մութ ու տարտամ քողարկումի մը մէջ կը պարփակէ ամէն բան։

Գրողներ կան որոնք այդ մշուշէն կ'ախոր-
ժին կամ զայն ստեղծել կը փորձեն իրենց
բանավէճերուն շուրջը, մէկ խմոր ընելու
համար գեղեցիկը ու տգեղը, մաքուրը ու
անաղնիւրը, ուղիղը ու սխալը: Կարգացողը
վայրկենական տպաւորութեամբ, իրաւունք
պիտի տայ իրենց. անկէց անդին հոգերնին է:

* *

Հակիրճ քաղուած մը պիտի բաւէ, մեզի
համար, իր իսկական ու ճշմարիտ բնոյթովը
ներկայել այս անհարկի ու անվայել յարձա-
կումներուն տեղի տուող հարցը, միշտ պատ-
րաստ ըլլալով շարունակել կամ վերսկսել
վէճը: Իր չուկէտէն, — պայմանաւ որ ...
déloyal ընդդիմախօսի մը կամ pagliaccio
մը հետ գործ չունենանք՝ ինչպէս պատահե-
ցաւ դժբաղդաբար մինչեւ այսօր: Սպասելով
ասանկ բարեդէպ հանդիպումի մը, երկու
բառով ըսենք ըսելիքնիս:

Բացարձակ խեղաթիւրում մը ու անպատ-
կառ սուտ մըն էր, ընթերցող հասարակու-
թեան կլկեցնել ուղեւը՝ թէ Տիար Յովհ.
Թաւաշանճեան միտքէն անցուցած, ըլլայ եր-
բեք Քրիզանթէմը գրելէ դադրած տեսնել,
պահանջելով իրմէ որ գրիչը վար դնէ: Հե-
տեւաբար, այս խեղաթիւրումին կոթնած՝
ողորմուկ ձեւեր առնելու տեղի չիկար, կա-
րեցական հոսանք մը ստեղծելու համար
դէպի իր կողմը, ո՛չ ալ իդմիրի Ազգ. Սըն-
տուկին 5000 ոսկիի պարտքը վճարելու ծի-
ծաղելի առաջարկ մը հրապարակ նետելու,
իրեւ հանրագումար փոխարինութիւն իր ընե-
լիք անձնական զոհողութեանը(?): Bluff մըն
էր այս որ «չի բռնուեցաւ»:

Դրասէր վաճառականը փափկութեամբ
ու քաղաքավարօրէն ըսած էր միայն Քրի-
զանթէմին. — «Կարելի չէ՞ արդեօք որ քիչ
մը չափաւորէք ձեր քօղամերկ նկարագրու-
թիւնները ու մերկապարանոց գրուածքները,
չափաւորութեան, մաքուր գրականութեան
սահմաններուն մէջ պահելով զանոնք. վեր-
ջապէս, այնպիսի դրոշմ մը տալով անոնց,
որ ընտանիքի հայր մը առանց վարանելու
կարենայ իր տունէն ներս՝ մտցնել ու իրի-
կունը սեղանին վրայ դնել զանոնք պարու-

նակող թերթը, զոր մանկամարդ աղջիկները
ու դեռատի պատանիները կարդան... առանց
չիկնելու»: Ահա՛ Թաւաշանճեան առաջարկը
իր իսկութեանը մէջ, որ անոր հեղինակին
գլխուն վրայ կուտակեց ամէնէն անպատկառ
յարձակումները ու ամէնէն նախատալից խօս-
քերը: Բարեբաղդաբար, ասոնք կու գային
միակեւ այնպիսի անձի մը կողմէ որուն
անհատականութիւնը կը բաւէր ակնկալուած
աղբեցութիւնը չի տալու համար անոնց: Մե-
ծագոյն պատիւը որ ընծայուեցաւ անոնց,
հեզնոտ քմծիծաղ մը կամ արհամարհոտ
շարժում մը առաջ բերելն էր:

Այս եղաւ, գէթ Պոլսոյ մէջ, ընթերցող-
ներուն տպաւորութիւնը, եւ կրնանք՝ ի
հարկին՝ ցոյց տալ մէկէ աւելի գրական լուրջ
անձնաւորութիւններ որոնք «առողջ եւ հան-
րօգուտ» կը հռչակեն Տիար Թաւաշանճեանի
պաշտպանած գրական ուղղութիւնը, — մինչ
անդին Քրիզանթէմ պապանծեցաւ մնաց երբ
իր ընդդիմախօս վաճառականը հարցոյց իրեն
հրապարակաւ, Մասիսի միջոցաւ, թէ որո՞նք
էին այն պատուաւոր անձերը որ քաջալերած
էին զինքը յարատեւել իր «մերկապարանոց
գրուածքներ» ու ճամբուն մէջ:

* *

Հապա Մասիսի խմբագրին անձնական
նամակները, որոնց հրատարակութեան շա-
րունակութեամբը Իզմիրցի քրոնիկագիրը
précédent մը կըստեղծէ լրագրական ազ-
նուութեան ու անհատական բարեկրթու-
թեան: Օ՛հ, թմրեցնող հարուածը զոր կը
կարծէ իջեցնել իր նախկին բարեկամին
գլխուն:

Այս խմբագրականը գրողը 1905 յուլիս
7/20ին սա առիդը կ'ուղղէ եղբի Քրիզան-
թէմին. — «A propos, ո՛ւր մնաց հակալքութիւն
յօդուածդ, մայիս 23ի նամակիդ մէջ կը
«գրէիր թէ աղուոր sujet մը ունիս. մի՛
«ուշանար, գրէ՛ ու զրկէ»: Հա՛րկ է չեղտել
թէ հակալքութեան յօդուած մը խօստացող
ու գրչին ծայրը աղուոր sujet մը ունեցող
հրապարակագիրը... միեւնո՛յն Քրիզանթէմն
է, որ չյաջողելով իր բաղձացած հրապուրիչ
ձեւը տալ իւր թին, վարանեցաւ գրելէ, ու

ամիսը չբոլորուած՝ volte — face ընելով, ելաւ միեւնոյն թերթին մէջ, ուր պիտի տեղաւորէր զայն՝ մրցանակին ակնկալութեամբ, հակալքողական մրցումը ծաղրել ու անոր հաստատիչը հեգնել։ Հիմայ, — հին հրապարակագիրներուն ոճովը խօսելու համար, — ընթերցողներու դատաստանին կը մնայ վըճուել թէ Մասիսի խմբագրին նամակներուն այս յատկանշական կէտը որի՞ ի նպաստ և որի՞ աննպաստ յայտնութիւն մը կը պարունակէ։ Գրողին թէ ստացողին ու հրապարակողին։ Կը կարծէինք որ մեր նախկին աշխատակիցը՝ հակառակ այս վէճին մէջ իր կրած շմորումին ու շփոթումին, որով sous-soleil կ'որոնցուց, լրագրողի բաւական tacte պահած ըլլար դեռ՝ չի խոստովանելու համար «ի բերանոյ իւրմէ» թէ ասկէ ձիւղ «տարի մը և 27 օր առաջ» փորձուեր էր ինք ալ առաջ անցնիլ ու մասնակցիլ հակալքողական մրցման։ Մի՞ մոռնաք որ, այս անդուստ տենչը ունեցողը ու ետքէն հակալքողական մրցումը մատը փաթթողը միեւնոյն անձերն են, սա տարբերութեամբ որ առաջինը Բրիգանթէմ կը կոչուէր ու երկրորդը Պ. Արթին Ալփիար։ Իր հուշակուած սրամտութենէն կըսպասէինք որ վերև արտատպուած պարբերութիւնն ալ ջնջէր Մասիսի խմբագրին անձնական նամակներուն մէջէն, ինչպէս հոգածութիւնը ունեցեր էր անհետացնելու բառեր ու տողեր, որոնք անհատապէս ու անկեղծապէս՝ իրեն ուղղուած, կրնային իրեն աննպաստ դառնալ՝ հրատարակութեան տըրուելով։

Բայց քիչ մնաց կը մոռնայինք թէ գօմէտի մը՝ խեղկատակութիւն մըն է մեր դէմ խաղացուածը, որով չ'արժեր ասկէ աւելի զբաղիլ։

Կը լսենք թէ Սանասարեան վարժարանի ինստիտուտութիւնը, իր վերջին նիստին մէջ, երկարօրէն զբաղելով այդ կրթական հաստատութեան ներքին բարեկարգութեան խնդրովը, Գր. Զաքարեան էֆ.ի տեղեկագրին եղբակացութեանց վրայ՝ հիմնական կարգադրութիւններ ըրեր է որոնց գործադրութիւնը անշուշտ պիտի զօրէ բաղձացուած

բարեփոխումը ու յառաջդիմութիւնը ընծայել այդ վարժարանին։ Փափագելի էր որ լրագրութիւնը լուսաբանուէր այս մասին և եղած վարժարանական կարգադրութիւնները հրատարակութեան տրուէին։ Այս կերպով միայն կրնայ փարատիլ այն տպաւորութիւնը զոր հանրութիւնը կրեց՝ մամուլին միջոցաւ եղած քննադատութիւնները կարգաւորել։

* * Կրթասիրական տեսակէտով հաճելի լուր մը կը հասնի Իգմիրէն։ Ս. Մեսրոպեան երկսեռ վարժարանը որուն մասնաւոր հոգածութիւն կը նուիրէ Վիճակին զրազեա առաջնորդը, Դուրեան Սրբազան, յառաջիկայ սեպտեմբերի սկիզբէն գիշերօթիկի պիտի վերածուի։ Թէ՛ քաղաքին արուարձաններէն և թէ՛ շրջակայ գաւառներէն պիտի ընդունուին գիշերօթիկ աշակերտներ 16 ոսկի տարեթոյնով, կէսը կանխիկ ու միւս կէսը յոշնուարին վճարելի։ Ուսուցիչներու ընտրելագոյն խումբ մը որոշուած է արդէն, որուն գլուխը կը գտնուի Դուրեան Սրբազան՝ իբրեւ այցելու և պատուակալ ուսուցիչ կրօնագիտութեան և գրաբար մատենագրութեան։ Լեզուներու և զանազան ուսմանց ու գիտութեանց նոր զարկ մը պիտի տրուի ձեռնհաս ուսուցիչներու միջոցաւ որոնց ցանկը հրատարակեցին օրաթերթերը։ Ուրախալի է տեսնել որ Իգմիրի Առաջնորդարանին ժողովները, և մասնաւորապէս Ուսումնական խորհուրդը, լուրջ բաղձանք մը ցոյց կուտան ու իրապէս կը ձեռնարկեն կրթական գործը դնելու խոստմնալից վիճակի մը մէջ, որուն յաջողութիւն կը մաղթենք։

Միսաք Մեծարենցի «Աստուածամայր» բանաստեղծութիւնը, թէև նշանակուած է այսօրուան բովանդակութեան մէջ, բայց նիւթերու առատութեան պատճառաւ յաջորդութիւն յետաձգել հարկադրուեցանք։

ԼԱՆ ԷԱՐՆ ՅԱՆՆՊԱՆՍ

Ներդունչ աւելնն՝ որ մարդկային հո՛ւր հոգին
Մեկանըւազ լարէ քնար ,
Կարհամարհէ վեհաբար
Շուքն հարուստին , անոր կարմիր սին ոսկին
Ամէնաշող դարպասէ
Երկնից՝ չէ՛ որ նա կ'իջնէ :

Եւ թըրթըռա՛յ յանկա՛րծ ծառին սոսկ վերեւ ,
Կամ հովուական վրայ հիւղին ,
Մո՛ւթ յարկին մէջ աղքատին .
Եւ թըխսէ հոն խորհո՛ւրդ խորին զուարթաթև՝
Անփառ անշուք ի յորրան
Զոր սուրբ արցունք կը թանան :

Հոմե՛ր մը կայ հո՛ն հո՛ն նիրհուն , յոր ըստրուկ
Մի անտէրունչ՝ լոկ յիւր սէր
Հեղու գըրգանք ոյժ ու ջեր .
Կամ տարամերժ իր անտառէն կայ մանուկ ,
Որ այծիկներն իր կողքայ ,
Ի՛սպայց Վիրգի՛լն ինք է նայ :

Կամ Մովսէ՛սն է՝ ծփուն չնչին որրոցով ,
Լիք խաղալիք յորձանքին ,
Զա՛յն իսկ փայլակ Սինային
Բիւր բիւրուց մէջ պիտի քարէ նա՛պ իր քով ,
Մինչ ինք քարհերձն՝ ի սիւն ամպ
Իսրայէլին տայր լոյծ ջամբ :

Այսպէ՛ս բընաղղն՝ հանուր բնութեան մէջ թագուն՝
Անմահութի՛ւն կը նօթճէ ,
Մարգրիտն յանդունդըս ճօճէ ,
Ոսկին ի խորս , եւ ադամանի չողչողուն
Նըւաղ ի ստուերըս անլոյս ,
Ու փառքն ի մութ խորասոյզ :

Փա՛ռք , այն արծի՛ւն աստուածային , ինքնածիլ
Փիւնիկ նորեկ դարէ դար ,
Որ գայ չըքնաղ այս աշխարհ՝
Լըսուիլ սիրած անուանն ու հո՛ն մեռանիլ ,
Ենթակային իսկ իր հետ
Վայրն ու որբանն ալ անհետ . . .

Մի՛ հրաշանար ապա՛ զուարթուն թէ աղու
Այժմ երկինքէն ձայնէ քեզ ,
Յիշէ՛ Յակոբն այն դու հեզ ,
Զի հանճարին լոյս երազներն ահարկու
Կիջնեն վըրայ ա՛յն գըլխոց ,
Ոյց լոկ քա՛ր մ՛է հանգըստոց :

Ե՛ս իսկ ինքնին՝ ճոխս ինչքերով պատարուն՝
Սիրո՛ւ տայի , ա՛հ , զիմ բաստ ,
Ոսկիքս՝ բախտին շնորհքն ինձ աստ՝
Փոխան անինչ անփառունակ ժամերուն ,
Մինչ չունէի ուրիշ գոյս՝
Բայց թըզենիքս՝ ու անքսայգւոյս ,

Փոխան երկնից տեսիլներուն , զոր յայթիռ
Կրկնէր հոգիս՝ անգնելի
Բոլոր ոսկւո՛յն աշխարհի ,
Երեկոյին պահուց՝ երբ մայրս ժիրածիր
Վառէր անձուկ իր երգին
Բոցիկն ի լոյս համեստին :

Կոչտ սեղանին փայտեայ մենք հոն շուրջն առած ,
Զոր դարձեալ ինք պատրաստէր
Մեզ մայրենին օրհնեալ սէր ,
Փա՛ռք գոչէինք հացի համար առ Աստուած ,
Մեր թարմ ու պարզ միրգերուն ,
Փա՛ռք մեր աւուր շնորհներուն :

ՆՈՒԱԳՔ ԼԱՍԱՐԴԻՆԻ

Քարզմ. Մ.

ԱՅՈՒՆ

Մառախուղին մէջ կ'երթան չինական մը կարթգելած
Եւ եզն իրեն , յամբօրէն , մառախուղին մէջ աչնան
Որ ծածկէ գիւղակներն աղքատիկ ու ամօթխած :

Կը քրթմնջէ գիւղացին , դարվար ի վար երթալէն ,
Երգ մը սիրոյ , դրժանքի , որ կը խօսի մատնիի
Ու սրտի մը վըրայ զոր անգըթօրէն կը կոտորեն :

Ա՛հ , աշո՛ւնը , աշո՛ւնը՝ որ ամառն է մեռցուցեր .
Մառախուղին մէջ կ'երթան երկու գորշգոյն սիւռէթներ :

ԿԻՌՅԵՕՍ ԱՐՕԼԻՆԷՐ

ՏԻՎԻՆ ՊՕՆԹԱՆ

(ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒՍԾՔ)

ԱՆՊՈՒՆՈՒ ՍՍԱՄԷՆՆ

Բարգմ. ՆՐԱՆՏ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

Լիւտիվին Պօնթան կը կոչուէր ան, և իր անունը կրճատելով Տիվին կըսէին: Տասներկու տարեկանին երազկոտ և չնորհալի պղտիկ աղջիկ մըն էր յստակ ու տոգունած աչքերով, որոնք ունէին անտառներու մէջ թաքուն աղբիւրի մը ցուրտ ծաւիռներէն: Երկար մութ շագանակագոյն մազերը թեթեւօրէն վէտվէտուն մետաքսի ալիքի մը նման իր ազազուն ուսերուն վրայ կիչնային: Իր բերանը սիրուն ու լուրջ էր և վերին շրթունքին անկիւնը գեղեցկութեան պիտակի մը գոյշ բիծը կար: Եւ գրեթէ միշտ գոց այս բերին ետին, և այս ծածանուտ մազերուն թանձրութեան ներքեւ, ու աղօտ աչքերուն խորը, վայրի և ազնիւ հոգիի մը պահուած ըլլալը կը զգացուէր: Իրաւքնէ մասնաւոր յատկանիշեր Տիվին Պօնթանը կը մատնանչէին ամէնուն մէջէն եւ որոնք արդէն կը յայտնուէին զարմանալի, ցայտուն կառկառունութեամբ մը:

Օժտուած փափկութեան կորովով մը, գրեթէ ծայրահեղ բարութեամբ մը որ առանց վերապահութեան կը նուիրուէր մարդերուն և իրերուն, և տաք զեղումով մը իր հոգեոյն խորքերուն մէջ կը ցայտէր, ան նոյնիսկ ամենէն խոստովանելի զգացումներու յայտնութեան առջև կընկրկէր՝ իբր մեղքի մը առջև: Ու մէկ բան այնքան դժնդակ էր իրեն համար որքան զգալը թէ ուրիշները իր սիրտը կը կարդան: Վարդ ամպ մը կը կարմրեցնէր անմիջապէս իր այտերը, աչքերը կը խոնարհէին անյաղթելի կերպով, և այս զգացումը կրնար փոխուիլ միշտ իսկ տառապանքի՝ եթէ չարամտօրէն զայն չի կասեցնէին:

Նոյնպէս ամէն բանէ առաջ ու ամէն բանի մէջ վերացած և գաղտնածածուկ հոգի մըն էր. յաճախ կը պատահէր որ ձեռքը ինկած խաղալիք մը սեղմէ իր կուրծքին վրայ կա-

տաղօրէն կամ թէ անձկալի շարժումներով ուղղուի երեւակայական էակներու որոնցմով լեցուցած էր իր մենավայրին անկիւնը. նոյն իսկ երբեմն ծաղիկները կը գրկէր և անտարակոյս, այս արարքները շատ զարմացուցած էին անոնք որոնք վարժուած էին տեսնել իր մէջ ամէն կերպով վերապահ ու լռակեաց պղտիկ հոգի մը:

Ծնած էր Տիվին, կերպով մը՝ ամօթը իր սրտին մէջ ունենալով, Ծիդիքական ամօթ-խածութիւնը, և ինչ որ մթաստուեր զգայնականութեան կը վերաբերէր, կարծես անոր մէջ բարոյականի փոխուած էր. և ամենաջնջին քողամերկուած յուզում մը, յանկարծակի կերպով դիտուած ամենաթեթեւ զգայնութիւն մը անոր մերկութեան անհանդուրժելի նեղսրտութիւնը կը պատճառէր:

Եւ ինչ բան որ ունէր գոյշ մը կիսալոյսի, լուռութեան, խորհրդաւորութեան, կը հրապուրէր զայն մասնաւորապէս: Անձկայրեաց և գրեթէ բարբարոս ճաշակ մը զոհողութեան, համակերպութեան տարօրինակ ախորժ մը որ խորհրդաւոր կերպով կ'առաջնորդէր զինքը տիրութեան և ասկէ զատ նաեւ նուրբ և վայրագ հեշտութեանց:

* *

Տիվին մեծցաւ, և տաժանագին չափահասութեան մը տաքնապներուն միջոցին, իր բնածին վայրենութիւնը ա'լ աւելի աճեցաւ: Ան կ'ընկրկէր ամենաթեթեւ հպումէ մը և ասոր հետեւանքով տեսակ մը ֆիզիքական ճախաւէրութիւն որ կը չեղտէր իրապէս իր գրգալի գեղեցկութիւնը: Իր մթաստուեր մազերը, մէջտեղէն ճեղքուած՝ սահելով քունքերէն վար, փափկօրէն ցցուած անբիծ ճակատը կը չըջանակէին. իր կապտորակ աչքերը շատ հին գոհարներու երեւոյթը ունէին. իր գրեթէ միշտ գոց բերանը դէպի անկիւնները զգալապէս կը բացուէր: Այս

պէս պաղ կը գտնէին զինքը, նոյնիսկ արհամարհու : Կը թողուր որ ըսէին, տեսակ մը անգիտակից պշտոտութեամբ՝ որ կ'արդարացնէր այդ կարծիքը : Ինք բարոյական պատուար մը կը գտնէր որուն ետեւը կրնար հետաքրքիր ակնարկներէ աւելի լաւ պահպանուիլ և այսպէս ան կապրէր կոյտերու անդորր կեանքը, երբ զգայնական ամենապարզ դէպք մը տակնուվրայ ըրաւ իր գոյութիւնը :

Մանկութեան բարեկամ մը, Մօրիս Տամիէն, գաւառը անցընելու եկաւ իր արձակուրդը : Արդ, զայն տեսնելով, անոր հետ խօսելով, — որովհետեւ Մօրիս յաճախ Տիվինի տունը կուգար երկու ընտանիքները միացնող սերտ յարաբերութեանց պատճառով, — կարմիր աւազով ծածկուած մեծ պարտէզին ծառուղիներուն մէջ երգեմնի տղայութիւնները յիշելով՝ Տիվին աստիճանաբար զգաց որ իր սիրտը կը վրդուլուի : Տարտամ գուրգուրանքները, որոնք իր վրայ կը տատանէին առտուան մշուշի մը պէս, խիստ քաղցր ճաճանչով մը օծուեցան : Մինչև այն ատեն աննշան մանրամասնութիւններ եզակեան շահեկանութիւն մը ստացան իրեն համար, միօրինակ ժամերը զուարթացան, և Տիվին յայտնութեան մը խռովքը և յափշտակութիւնը զգաց :

Օր մը, կէս օրէ վերջը երբ մինակ էին պարտէզին վրայ նայող սրահին մէջ, չինձու կերպով տուալ տարուած խօսակցութիւնը յանկարծ ընդհատուեցաւ և երկուքը մէկ լուռ մնացին իրարու դիմաց : Բաց պատուհանէն ժրջան քաղաքին հեռաւոր աղմուկները կը հասնէին, կառքի թաւալումներ, ձուլարաններու մուրճեր, փողոցի ժխորներ և տերեւներու շարունակական սօսափիւնը ներդաշնակ էր մետաքսի չրչիւմի մը նման : Իրենց մէջ չի խոստովանուած բանի մը ներկայութիւնը յարաճուն յուզումով մը կը լեցնէր զիրենք : Տիվին նեղութիւն կըզգար, մինչեւ իսկ անձկութիւն առկէ, և իր հոգին կը տրոփէր իր երկար արտեւանունքներուն քօղին տակ : Այս վիճակէն ազատելու համար, բայց դաշնակին առջև անցաւ և սկսու նուազել :

Մօրիս մօտեցաւ : Տիվինի սիրտը այնքան զօրաւոր կերպով կը բարախէր որ որոյապէս կըզգար անոր անկանոն ու խուլ զարկերը : Յանկարծ զգաց որ երկու հրակէզ, տենդէն չորցած չրթունքներ կը հպին վիզին : Արդէն իսկ ան ոտքի ելած էր վերստին, մահատիպ դալկութեամբ մը տոգունած : Յանկարծ խռոված ջուրի մը պէս, իր աչքերը սեղան, յիմարի նայուածք մը գամեց Մօրիսի վրայ, և առանց ատեն ձգելու որ անիկա չարժուժ մը ընէ, սրահէն դուրս խոյացաւ :

Բոլոր իր էութիւնը անբացատրելի չփութութեան մը մատնուած էր և երկար ժամերու պէտք ունեցաւ իր հանդարտութիւնը վերստանալու համար : Իր հոգիին ամէնէն զգայուն մասին վրայ կըզգար անհանդուրժելի այրուցքի մը կսկիծը :

Բոլոր այն քաղցր ստուերը որով կը պարփակուէր, վայրագօրէն բռնաբարուած էր, եւ կըզգար թէ իրեն ալեւս անկարելի պիտի ըլլար նորէն Մօրիսի առջեւ ելնել : Մնաց որ արձակուրդը վերջանալու մօտ էր, եւ ինք կրնար պատճառներ ստեղծել : Հանճարեղ սիրտ՝ ինքզինքը տանչելու, եւ նոյնքան հեշտաբոյր կուսութիւն, որ ուրիշ բան չէր երազեր եթէ ոչ անոր շուրջը հիւսել ցանցի մը հապարաւոր թելերը՝ հոն գաղտնի ծածկելու համար այն սարսուռին քաղցրութիւնը որով տակաւին կը գալարուէր :

Մօրիսի մեկնած առտուն, արշալոյսին ելաւ եւ իր պատուհանէն լրտեսեց անոր մեկնումը : Անկէ բաժնուած էր մուսլինէ նուրը վարագոյրով մը որ կը դողդղար ձեռքերուն մէջ : Մօրիս գլուխը վերցուց, եւ քայլը դանդաղեցուց. սակայն Տիվին անշարժ մնաց, հոգին բոլորովին սարսուռն եւ պրկուած, եւ երկար ատեն՝ տակաւին հոն կեցաւ աչքերուն անկիւնները ունենալով խոշոր կայլակներ արցունքի որոնք սակայն չէին իյնար...

* *

Մօրիս քանի մը տարի ետքը վերադարձաւ : Ո՛հ, այս վերադարձը : Տիվին որքան նուազեցուցած էր արդէն անոր յուզումները : Ուրիշ ամէն տեղերէ աւելի գաւառը, աւ-

մենօրեայ անշարժ միօրինակութեան մէջ, այդ բաներուն հակամէտ մարդոց ներքին կեանքը տարօրինակ ներզօրութիւն մը կըստանայ: Հոն կը կազմուին մենակեաց ճակատագիրները, մեկամողձոտ կամ փառաւոր հոգիի մը յիշատակարանները՝ քարը քարին, օրը օրին միակ զգացումի մը փառքին բարձրացուած են:

Այսպէս այս յամրնթաց տարիներու միջոցին Տիվին իր բովանդակ զգայնական գործունէութիւնը կեդրոնացուցած էր Մօրիսի հետ անցուցած երկու ամիսներուն յիշատակին վրայ: Ոչ մէկ օր դադարած էր անոր վրայ մտածելէ: Իր հոգիին խորը կառուցած էր տեսակ մը մտերմական աղօթարան, ուր երկար ժամեր կը փակուէր, յոյսի այրող հեշտութիւններու վայելքներուն նուիրուած: Ոչ ոք կը կասկածէր այս խորհրդաւոր գութագութեան քննարկէն զոր կը պահէր նախանձոտութեամբ, եւ ասիկա հրճուանք մըն էր որուն անսովոր նրբազգայնութիւնները հետզհետէ կը ճաշակէր իր սիրտը՝ որչափ որ մեծնար:

Երբ ինքզինքը նորէն գտաւ դէմ դիմաց՝ երիտասարդին հետ, մինչեւ սրտին խորը ջլատող սարսուռ մը զգաց եւ մեռելի անկենդան եւ անգոյն պղտիկ ձեռք մըն էր որ կարկառեց անոր: Աւա՛ղ, այն վայրկեանը զոր նախապէս այնչափ ապրած էր, դժնդակ յուսախաբուութիւն մը միայն պիտի բերէր իրեն:

Մօրիս այդ պղտիկ ձեռքը բռնեց, եւ իր մատներուն անտարբեր եւ բարեկամական սեղմումով զգացուց թէ ա՛լ եւս անցեալը չէր յիշեր:

Տիվին նախ ընկճուած, յաջորդ օրերը փորձեց քիչ մը պաղարիւնութիւն գտնել: Վերջապէս Մօրիս տակաւին ազատ էր եւ իրեն արգիւտած չէր փնտռել թէ իրապէս անկէ բան մը չէ՝ մնացած իր սրտին մէջ: Բայց ամէն անգամ որ այս մտածումը կուռնէր, իր բոլոր արեւնը կը սառէր, եւ պահ մը անաղդեցիկ յստակութեամբ աւելի նախամեծար կը համարէր մեռնիլ քան թէ անոր շրթունքները բանալ այդ մասին:

Այսպէս Տիվին շարաթներ անցուց մինչեւ

նեարդները գալարատանչ տաքնապներով ցնցուած, որոնք կարգով զայն ամէնէն հակասական եզրակացութիւններու մէջ կը նետէին: Բոլոր իր քաջութիւնը կ'ամփոփէր, կողեւորէր, նպաստաւոր նշաններէ, խօսքէ մը, ժպիտէ մը՝ որոնց մէջ վերստին կը գտնէր երբեմնի խանդաղատանքէն մաս մը: Յետոյ յաջորդ վայրկեանին կընկրկէր սարսափած՝ զինքը տանչող մտածումը նոյնիսկ շարժուածեով մը մատնելու անյաղթելի գարշանքին առջև:

Մինչ այս մինչ այն, բարեկամուհիներէն մէկուն Լիտի Մօրէնի հայրը, որ քանի մը մղոն անդին կարեւոր գործարան մը ունէր, Մօրիսը կը հրաւիրէր որպէս զի հոն կարգ մը բարեփոխութիւններ ուսումնասիրէ: Երիտասարդը ընդունեց, երեք ամիս գիւղը բնակեցաւ և դարձին Լիտիի հետ նշանուած էր...

Ասիկա սոսկալի հարուած մը եղաւ Տիվինի համար: Ինչպէս յաճախ կը պատահի, նախատեսած էր բոլոր պատահականութիւնները առանց ճշգրտօրէն կարենալ երեւակայնութեամբ ամէնէն ցաւազինը:

Մէկ քարի օր յետոյ, իրիկուն մը իր սենեակին մէջ երբ գիշերուան համար մազերը կը յարդարէր, բոլոր անդամներուն մէջ անհուն թուլութիւն մը զգալով գնաց պատուհանին կրթնեցաւ և լիաթոք շնչեց գիշերային զովութիւնը: Գարուն էր, իրիկունս դէմ փոթորիկ մը պատահած էր, ջուրի զանգուածներ կը փայլփլէին դեռ հոս, հոն, սալայատակին անհարթութեանց մէջ, թըրջուած փոշիի և զովացած կանանչութիւններու թափանցող հոտ մը կը բարձրանար, և երբեմն քաղցր հովի շունչեր կ'անցնէին, այնքան քաղցր որ մարդուն աչքերը կը գոցէին:

Տիվին հոն կը մնար, անշարժ, իր ծանր մազերուն փունջը մէկ կողմէն կախուած, և անսահման վիատութիւն մը կը զգար իր բոլոր մարմինին մէջ: Յանկարծ պողոտային լայն մայթին վրայ, իր դէմը տեսաւ Լիտին և Մօրիսը որոնք մէկտեղ կը վերադառնային ընտանեկան խրախճանքէ մը: Անոնք սիրահարներու յամրնթաց քնացքով մը կը քա-

լէին, և ամայի թաղին լռութեան մէջ իրենց ձայնը միայն կը լսուէր: Տիվին ծռած՝ թարթափուն, սեւեռուն ականարկով մը անոնց կը հետեւէր և երբ անոնք ծառերուն թանձր ստուերին մէջէն անյայտացան, ծունկերուն վրայ սահեցաւ ինկաւ, սիրտը նեարդ առ նեարդ բոկտուած վայրագ տառապանքով մը և անմրմունջ նուաղեցաւ:

* *

Լիտիի ամուսնութենէն յետոյ, որ չուշացաւ, Տիվին մեքենական կեանք մը ապրեցաւ իր երազին աւերակներուն վրայ: Իր շուրջը գտնուողներէն ոչ մէկը տեղեկութիւն ունէր այս տուամէն որ իր սիրտը տակնուվրայ ըրած էր: Երեսին գոյնը մարեցաւ, փայլատեցաւ հրավառ ու ջինջ արիւնը զոր յոյսը տուած էր իր գէմքին: Այլքերուն նայուածքը կարծես կը մթափէր, գէմքը ալ աւելի համր կը դառնար: Թեկնածուներ ներկայացան, բայց ինք ամէնքն ալ մերժեց, կծու գոհունակութիւն մը զգալով իր կեանքին այսպէս անել ճամբուն մը մէջ խորամխուելէն, իբրեւ թէ հաճոյքի և խինդի արարած մը եղած չըլլալով՝ անխուստան մէջ գտնէր իր ճամբան:

Պոռոյաները, գիւղական կեանքին հասարակ և միօրինակ զուարճութիւնները կըսկսէին ճնշել իր վրայ: Ամէն բանէ աւելի ան կը նախընտրէր իր «մենութիւնը»: Եւ ինչպէս որ կը պատահէր այն էակներուն որոնց ինքնամփոփ կեանքը երեւակայութիւնը կը կենդանացնէ, այդ բառին մէջ իր էութեան խորը կը տեսնէր, տեսակ մը պարտէզ՝ գաղտնածածուկ բուսականութեամբ լեցուն պարտէզ մը, աշնայնի տմոյն երկինքի մը տակ, մթին ու բուրու մնալից բազել և թաւուտը — ուր կը թափառէր երկար ժամեր իր խոկմանց հետ:

Հինգ տարիներ սա՛ած անցած էին երբ յանկարծօրէն հազիւ տասն օրուան մէջ Լիտի մեռաւ սուր թոքատապի մը հետեւանքով և Մօրիս այրի մնաց չորս տարեկան մանչ զաւակով մը: Խնդճ տղուն վիշտը անհուն եղաւ, որովհետեւ իր կիներ կը սիրէր ժիր երիտասարդութեան մը բովանդակ ուժգնութեամբ: Այս աղէտին մէջ, առաջնորդուած

եսասէր և անվրիպելի բնազդէ մը, եկաւ ապաստան գտնել հոն՝ ուր կըզգար թէ պիտի կրնար ալ աւելի լաւ մխիթարուիլ: Չխաբուեցաւ: Տիվին, լռեցնելով զինքը վրդովող մթին ընդզուգումները որոնք տակաւին կը խլրտէին իր ներսը, ստանձնեց այս նոր դերը: Իր ձեռքը կարկառեց դէպի այդ փշալից պսակը և զայն իր գլխին վրայ դրաւ: Յետոյ քիչ առ քիչ իր խօսքերը չափելով և հանգուցեալը կեանքին խառնելով՝ բարդ և հրաշալի փափկութեան մը աշխատութեանը մէջ կըրցաւ մեղմացնել անդարմանելի վիշտին արհաւիրքը և ամենօրեայ անդորրութիւն մը վերահաստատել Մօրիսի վշտահար սրտին մէջ: Այսպէս իրաց բնական շղթայաւորումով մը, տարիուկէս ետքը Մօրիս մտածեց ամուսնանալ Տիվինի հետ:

Իր երիտասարդութեան երազը կը յանգէր ուրեմն այս սրտածմելի վերջաբանին. ո՛հ, յիրաւի, առանց ցաւագին հեգնութեան մը չէր որ Տիվին երեսունին մօտիկ, հազաւ հարսի ձերմակ չըջազգեստը և եկեղեցիին մէջ որոշապէս տեսնուեցաւ իր վրայ զոհուածի և յախտակուածի երեւոյթ մը այնչափ տեսանելի որ ներկաներէն անոնք որոնք իրազէկ չէին այդ տեսարանին, ապշահար եղան:

Այս նոր յարկին տակ՝ ուր կուգար կուրուսեալին տեղը բռնելու, գտաւ ինչ որ նախատեսած էր — հաւատարիմ խանդաղատանք մը, մեղամաղձոտ բոյն մը, սէր և հանգարտութիւն:

Սակայն իր սիրտը տակաւին կ'արիւնէր: Յաճախ կը պատահէր որ Մօրիս փոքրիկն Ռենէն — երախան — բռնէր և անոր երեսը նայէր առանց բան մը ըսելու, մառախլապատ աչքերով, և Տիվին տառապանքը զգալով կ'ըսէր «որչա՛փ կը նմանի Լիտիին», այնպէս չէ՛, աղւորս»: Ի՛նչպէս ինք ալ չէր կրնար լալ այդ միջոցին այն տաք արցունքներով զորս Մօրիս կը թողուր որ առանց սրբելու հոսէին իր մօրուքին վրայէն: Սակայն, մեծ երջանկութիւն մը ունեցաւ, որուն վրայ բնաւ խորհած չէր. զգաց որ մայր կըլլար և այս մտածումը նորէն բացաւ իր զգացման

չորրորդ աղբիւրները և իր մէջ ժայթքումներ
ունեցաւ: Բոլոր մարմինը խանդաղատանքով
մը ներարկուած՝ սկսաւ նորէն ծաղկիլ: Վար-
դագոյն արիւն մը գունաւորեց իր այտերը,
ականջներուն եղերքը կարմրեցաւ, քնքուշու-
թիւն մը կլորցուց իր աչքերը, ուռեցուց
մէջքը, գնացքը յամրացաւ: Թեթեւօրէն
կքած, երեւան հանեց լեցուն գիծերու փար-
թամութիւն մը, և իրիկուն մը երկարատեւ
երանաւէտ խօսակցութեան մը միջոցին Մո-
րիսի աչքերուն մէջ տեսաւ թէ ինք ալ Սէր
պիտի կոչուի: Զարմանահար զգլխանք մը
եղաւ այս, ուրախութիւն մը որուն վստահ
չէր, եւ որուն մէջէն թարթափելով կը քա-
լէր կարծես չմորած: Անհանգիստ գործնէ-
ութիւն մը փրկեց զինքը: Հաճոյք զգաց
առտնին յարդարումներով, նոր կահ կարա-
սիներ շտկեց, լուսաւոր սենեակներ զար-
դարել տուաւ: Կերպով մը ինք իրմէն դուրս
ելած յոյսի մը կրքին մէջ, իր կեանքին մէջ
առաջին անգամ ըլլալով ինքզինքը երջանիկ
զգաց: Նոյնիսկ ճամբորդութիւն մը երազեց
հարաւային երկիրներու մէջ, դէպի գաղջ
ծովերը, մեկանուշ անունով քաղաքներու
մէջ ուր օդը մեղրի քաղցրութիւնը ունի:

Թանկարծ Ռընէն անկողին ինկաւ ժան-
տատենդէ բռնուած: Բոխկը հիւանդին ծանր
վիճակը նկատի առնելով Տիվինին բացար-
ձակապէս արգիլեց խօսեալ անոր, սակայն
բոխկը նկատողութեան չէր առած այս տարօ-
րինակ սիրտը: Առաջին ժամէն իսկ տաան
օր շարունակ կարծես զղջալով Տիվին պզտի-
կին քով տեղաւորուեցաւ: հակառակ ամէն
թախանձանքներու, ապականուած սենեկին
մէջ ապրեցաւ, հաղիւ քանի մը ժամ քնա-
նալով հօս հոն թիկնաթոռի մը վրայ, առանց
իր զգեստները հանելու, անձնազոհութեան
գերագոյն վայելքը կը զգար, իր անձնուի-
րութիւնը անդիմադրելի եւ մոլորուն բան
մը ունէր եւ այլափոխուած կը քալէր դուռ
հերոսութեան հրեղէն օդին մէջ:

Ռընէ փրկուեցաւ, սակայն շատ յուզում-
ներ Տիվինը ընկճած էին, իր առողջութիւնը
անդարմանելիօրէն խաթարուած էր եւ հե-
տեւաբար հազարաւոր տանջանքներով զաւակ
մը ծնաւ: Եւ միայն քանի մը օր կըրցաւ ապրիլ:

Այսպէս, կեանքը իր վրայ կը բռնանար,
եւ անոր կրկնակի հարուածները տեսնելով
կարելի էր խորհիլ թէ ճակատագիրը կուզէր
լմնցնել իր գործը մինչեւ ծայրը եւ ընտրուած
էակի մը աստիճանին հասցնել այս մարտի-
րօսուհին և այդ հոգիին արտայայտել տալ
իր ամէնէն մեկանոյշ բոյրը:

Իր մայրական մարմնոյն մէջ անցողակի
և քնազգական ցնցումներէն յետոյ, Տիվին
այս գերագոյն սուգը տարաւ անխորաչափելի
քաղցրութեամբ և վարժ համակերպութեամբ
մը: Օ՛հ, որքան յաճախ իր սիրտը կը խո-
յանար դէպի վանքերու վերջնական խաղա-
ղութիւնը, լռութեամբ համակուած անոր
թանձր պատերուն ետին հանգիստը որքան
քաղցր պիտի ըլլար իր պարտասօած հոգիին
համար: Եւ շատ անգամներ, ճերմակ խու-
ցներուն և կապոյտ քարերով սալարկուած
երկար նրբանցքներուն հեռաւոր թարմու-
թեանը ըղձալով, իր ձեռքերը կը կարկառէր
դէպի այս հանդարտ մենաստանները որոնք
կարծես մահուան նախասենեակներն են:
Բայց ինք ամուսնոյն հանդէպ պարտական
էր, թէ և սոսկալի փորձէն ետքը ա՛յ ուժ
չէր զգար կեանքը սկսելու և յետոյ Ռընէն
կար, իր փրկած տղան զոր Յաւի մկրտու-
թիւն մը իրը ըրած էր կերպով մը:

Հետեւաբար մնաց, իր սրտին խորը իջաւ
և հոն փակուեցաւ, արտաքինին երեսին վրայ
անեղծ տիրութեան մը դիմակը պահելով:

Իր մտածմանց գաղտնի հսկումը, իր
կեանքին ներքին մղումը զինքը կը տանէին
մշտնջենական անձնազոհութեան մը: ամէն
ինչ իր մէջ զոհուելու պարտուակ մըն էր և
ամենադոյզն երախտագիտութեան մը գո-
հունակութենէն իսկ ինքզինքը զրկել գիտէր:
Ասկէ զատ, այսպէս շարժելով, տարօրինա-
պէս ճկուն այս հոգին բնու երբեք չէր խա-
բեր ինքզինքը, աստիճանաբար տեղափո-
խութեամբ մը իր անձնաւորութեան հիա-
նալի խեղաթիւրումով՝ յաջողած էր իր
կեանքը փոխադրել ուրիշներու մէջ: Ոչ մէկ
ուղղակի հաճոյք չէր ազդեր իրեն, կարծես
իրեն համար չէր ապրեր, այլ միայն իր շուրջը
գտնուողներուն երջանկութեամբ կը սնա-
նէր, և իր զգայնութիւնը միշտ վառ, սակայն

տեսակ մը կենդանութենէ զրկուած, ան-
մարմին՝ բոլորովին հոգեկան դարձած էր։
Խոհական և հրավառ հոգի որուն սկզբունք-
ները օրէ օր կը նրբացնէր յարատեւ չըջա-
փոխութիւն մը։ Բայց դեռ նոյնն էր ինչպէս
երբեմն եւ թէեւ պատահէր որ Բասքալ Աբբան,
իր դաստիարակը, ծայրահեղ յօժարութեան
վրայ խօսէր զոր կը տածեն ինչ ինչ նկա-
րագիրներ հանդէպ կեանքի դառնու-
թիւններու, յանկարծ կը կարմրէր իր սրտին
գաղտնի ծալքերուն մէջ հարուածուած՝ կղե-
րականին ճշմարիտ խօսքովը։

* *

Երկա՛ր տարիներ անցան գացին։ Արկածի
մը հետեւանօք Մօրիս մեռաւ, եւ որովհետեւ
իր առաջին կնոջ՝ Լիտիի մահուան ատեն,
գերեզմանատան մէջ հող մը առնելով չիբրիմ
մը կանգնած էր, ճիշդ հո՛ն անոր քովը
թաղուեցաւ։

Որնէ իր դպրոցական չըջանը աւարտեց,
եւ գրեթէ անմիջապէս յետոյ հեռաւոր պաշ-
տօն մը ստացաւ գալթավայրի մը մէջ,
պաշտօն մը որ փայլուն ասպարէզի մը մեկ
նակէտը կրնար ըլլալ ապագային։ Որովհետեւ
կը վարանէր այն պատճառով որ Տիվինը իր
հարազատ մօրը չափ կը սիրէր, — նորէն Տի-
վինը եղաւ որ զայն ստիպեց ընդունիլ,
այսպէս խորտակելով իր սրտին վերջին կապը։
Եւ նորէն, իր մենութիւնը գտաւ։

Քաղաքին կեդրոնէն հեռու փոքրիկ տուն
մը վարձեց ամայի փողոցի մը մէջ, մամու-
ռով կանանչցած սալայատակներով եւ զոր
մասամբ կ'եղերէին ապաստարանի մը պար-
տէզին պատերը։

Օրն ի բուն, հնաւուրց կահերով զար-
դարուած սենեակներուն մէջ, վերջալոյսի
նշույլովը ողողուած ուր հինցած լուսանկար-
ներ կը տփգունէին, Տիվին կ'երթեւեկէր
անշուշտ կամ ժամերով կը կենար, գլորոցի
մը վրայ հակած՝ խանդաղատիչ նշխարներու
բեկորներ քերմեռանդութեամբ կարգի կը
դնէր։ Աչքերը շատ սպասած ըլլալէն կարծես
մաշած, ալ եւս գոյն չունէին, եւ իր ճեր-
մակ մաշերուն տակ մեղրամոմի գէւոր՝
վիշտերով ծալ ծալ արցունքներով փափկուն,

վտիտ, հալած, աննիւթացած մօրթով կը
նմանէր յուզիչ տապանակի մը որ իր բաց-
ուած քներէն կը մաղէր անբացատրելի հոգիի
մը ճառագայթները։

Այսպէս ան կ'ապրէր, իր յիշատակներուն
մէջ խորասուզուած, քաղցր եւ միօրինակ
օրեր, վերադարձած մանկութեան սովորու-
թիւններուն։

Միայն մօտակայ եկեղեցին երթալու
համար դուրս կ'ելնէր, եւ հո՛ն աղօթքին
մէջ մխրճուած, հոգին բոլորովին թեթեւ
եւ ազատ թռչելու պատրաստուող աղաւ-
նիներու անհամբեր եւ մեկանոյլ սարսուռը
ունէր...

Albert Samain

ԵՐԱՁԱՆՔԻՍ ՄԷՉ

(ԲՄԱԵԲ)

Արեւմուտքէն վերջը, երբ իրիկուան ա-
ղօթքն ալ կը վերջանայ ու լուսիւնը կը
պատէ ամէն կողմ, սենեակիս պատուհանին
մօտ նստած՝ հեռուի ոլորտներուն կերթայ
միտքս, դիմացի լերկ ու մերկ լեռներէն
անդին մթնցած հորիզոններէն ալ անդին,
ուր նոր կայք մը, նոր մթնոլորտ մը կը
փնտռէ հոգիս լայնկեկ մը փռուելու, մեկ-
նուելու համար օդին մէջ, օդէն վար, ուր
զեփիւռներ պար պիտի առնեն չորս դիս,
ու երկիւնքի հաւքերէն կանաչ սնդուս փե-
տուրներովնին պիտի հովահարեն իս մեղ-
մօրօր։

Ու ես կը ցանկամ։

Կը ցանկամ այդ միայնութեան ու ան-
մեղութեան կեանքին, ուր հազար երանու-
թիւններ կը գգուն քեզի, ուր երեւակայօտ
միտքդ լիքը պիտի ըլլայ քաղցրիկ ու եր-
ջանկաւէտ ծնունդներով, որոնք միշտ թարմ՝
միշտ նոր պիտի մնան չծերացող աչքերուդ
առջև, որոնց նորահաս փթթումը պիտի
տեսնես, ու չպիտի վատին, չպիտի ծերանան
անոնք, չուշանի պ'ս գիրդ, ու յասփիկի

պէս անմեղ պիտի ըլլան : Ա՛խ , հազար երանի այդ երկիրնքի հաւքերուն , անմեղ , շատ անմեղ :

Կը ցանկամ թառիլ ես ալ կանաչորակ գետիններու վրայ , պահ մը դադար տալու համար իմ ալ ոտքերուս , ուր սքանչելի ծաղիկներս իրենց կուրծքերը ցուցադրած են հոյակապ արեւին դիմաց , կերակուր և կեանք բաշխելու համար փուշոտ մեղուններուն , և պայծառացնելու համար բնութիւնը որին մէկ աննշան բեկորն եմ ես , և ստեղծողին մէկ խաղըք : Հոն է կեանքը , հոն է բուրմունքը ամէն անուշահոտութեանց : Յոգնութիւնը չուտ կը պատէ իս , անի ալ տակաւին իր ձանձրոյթը ունի , աւելի վեր , վեր վեր դէպի նորագոյն բնագաւառները , ուր ո՛չ թռչունները կրնան հասնիլ ու ոչ ալ մարդկային ընկերութեան բովանդակ աղտոտութիւնը , ժխորային կեանքի այլանդակ դրուագները կրնան մուտ գտնել :

Կը ցանկամ այն մաքուր սպիտակութիւն նով ամպերուն , կաթէն աւելի ճերմակ , փրփուրէն ու շուշանէն ալ աւելի ճերմակ : Անոնք կ'ըլլան ինծի բարձ , ուր գլուխս հանգչեցնէի , կակուղ վաղկայ կուրծքերնուն վրայ թաղուէի նոր երանութիւններու մէջ , նայելու համար դէպի վար ուր նախանձոտութեան գարշ բուրմունքը , մարդկային անբարոյութիւններ , աչքի առջև կուգան այնքան ինկածօրէն :

— Կը բաւէ սիրելիս , ի՞նչ կընես հոտ :

Կիսս որ իս փնտռելու եկած է : Աթափումը կը պատէ չորս դիս , աչքերս վեր կ'առնեմ , ու կը տեսնեմ զինքը , որ անմեղօրէն կը ժպտի ինծի : Երջանիկ էակ , որ սակայն կ'երջանկացնես :

ԽՈՍՐՈՎ ՔԷՇԻՇԵԱՆ

ՆՅՐԱՆՁՆԱԶՈՒՄ

I

Հրակետդի մը պէս հսկայ , ոսկեղօծ , լերան ետին կը վառի գունտն արեւուն : Հեղուկ , բոցեղ գոյներով ալ լեփեցուն , Մայր-բնութեան երանգապնակն է ան հոծ :

Ու նշուող , բոսորագեղ , ոսկեվառ , իր թովքին մէջ արեւելեան երկիրնքի , վերջալոյսը հետզհետէ կը սմբի , իր շառայլը ջրվիժելով դէպ ի վար :

Լերդաքարի շողեր կ'իյնան հրափայլ , Ամպերուն լայն՝ բայց ձեւաւոր ճեղքերէն . Գիշերն իր սեւ ոստայնն հիւսէ պիտի ա՛լ :

Եւ տխրանուշ թաղծութեան մէջ այս անտես , Մատներովդ թարթիչները կը գոցես , Թմրութիւն մը մարմնիս տալով տարօրէն :

II

Հիմայ երկու բանի վրայ կը խորհիմ , Աչքերըս գոց , ցնորայոյդ ու հանդարտ , վերջալոյսին , և մանաւանդ քո՛ւ վրադ , իտէական քաղցրութիւնով մը խորին :

Շքեղ մարմնիդ շուշանէ սիւնը քովէս կը բարձրանայ . անոր յենած՝ կը խոկամ . Դո՛ւն ալ փակէ քու աչերըդ այս անգամ , Ու յամրաբար ներանձնացի՛ր ինծի պէս :

Իրականին սոսկումն ունիմ , դալկադէմ . Աննիւթացած կ'ուզեմ տեսնել ամէն բան . Աստուածացումն էր դոր տեսայ բնութեան :

Հիմայ ո՛չ կիրք ո՛չ ալ նախանձ կըզգամ ես , Ո՛չ մէկ կասկած կը խոշտանգէ միտքս այսպէս , Բեզ երազի մէջ լո՛կ տեսած կը կարծեմ :

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ

9.

Հռչակաւոր այգերան եւ այգեգործ Կիւսմով Ֆօէքսի կեանքն ու գործերը.

Ֆօէքսի Տնօրէնութեան միջոցին Գաղիոյ երկրագործական նախարարները իրենց այցելութիւններով պատուեցին միշտ Մօնթէլիէի հողագործական Ուսումնարանը. ամէնքն ալ այս կերպով մօտէն գիտակ եղան անոր կատարած թանկագին ծառայութեանց, սիրով և լրջօրէն ընդունեցին բոլոր այն ծրագիրները, զորս Ֆօէքս իր պաշտօնակիցներուն հետ միախորհուրդ կը պատրաստէր անվնաս և որոնց ամէնուն ալ նպատակն էր, օրըստօրէ ընդարձակել այդ Ուսումնարանը, նոր աշխատանոցներու յաւելմամբ, նոր շէնքերու կառուցմամբ:

Մօնթէլիէի հողագործական Ուսումնարանը, Ֆօէքսի Տնօրէնութեան առաջին տարւոյն մէջ (1882), պատիւն ունեցաւ հռչակաւոր Բասթօրի այցելութիւնն ալ վայելելու. մեծանուն գիտունը, հմտալից դասախօսութեամբ մը, պարզեց հրապարակաւ այն սկզբունքները որոնց վրայ հիմնուած էր իր նոր հնարած ածխախտի չիճուկը (virus de charbon). այդ թուականէն սկսեալ կանոնաւոր փորձեր տեղի ունեցան Ուսումնարանին պատկանող ոչխարներու վրայ, ընդհանրողութեամբ ծանօթ անասնաբոյժ Պ. Բուրքիէի. այդ պատուաստն ալ ստացաւ այս կերպով իր վերջնական նուիրագործումը:

Ֆօէքսի օրով, Մօնթէլիէի հողագործական Ուսումնարանը, Մայեօներու⁽¹⁾,

⁽¹⁾ Է. Մայեօ (1841—1889) Բասթօրի երեմնի աշակերտն և ի վերջոյ անոր աշխատակիցը, Մօնթէլիէի Շերամաբուժական կայանին առաջին Տնօրէն — Ուսուցիչն է եղած 15 տարիներ շարունակ և ամբողջ Եւրոպիոյ մէջ մեծ համբաւ վայելած, իբր գիտուն չերամաբոյժ. ունի բազմաթիւ երկեր, որոնց մէջ առաջին տեղը կը գրաւէ «Թթննայ չերամին վրայ դասեր»ը որուն մէկ նոր տպագրու-

վալէրի — Մայեօներու⁽²⁾, Գրովաներու⁽³⁾, Տիւրաններու, Շտօնօներու, Բօնվէրներու, Թայեօներու⁽⁴⁾, Շապանէքներու⁽⁵⁾ շնորհիւ տակաւ սկսաւ տիեզերական համբաւ ու հռչակ հանել, որով և կարողացաւ յինքն ձգել ստուար թիւ մը ուսանողներու որոնց մէջ օտար տարրը (Իտալացի, Սպանիացի, Օսմանցի, Եգիպտացի, Ռուս, Չինացի, Ճա-

թիւնն ի լոյս ընծայուեցաւ անցեալ տարի, Մայեօի օգնականին և այժմու Տնօրէնին Պ. Լամպէրի շնորհիւ.

⁽²⁾ Նշանաւոր միջատաբան (entomologiste) որթալուծին վրայ կարեւոր հետազօտութիւններ ըրած է. իր «որթատուկի միջատները» անուն գործը միակն է տեսակին մէջ:

⁽³⁾ Սա միանգամայն ուսուցիչ է եղած Մօնթէլիէի գիտական համալսարանին. իբր բնագէտ անուն մ'ունի, իր հնարած օդերեւութաբանական մէկ քանի կարեւոր գործիքներուն շնորհիւ. Գրովա՝ իր օգնականին անմոռանալի Հուտայի հետ կազմակերպած է Մօնթէլիէի հողագործական Ուսումնարանին Դիտարանը:

⁽⁴⁾ Վ. Թայեօն ուսուցիչ է եղած անասնաբուժութեան, Ալֆօրի անասնաբուժական Ուսումնարանին ամէնէն փայլուն աշակերտն ըլլալէ վերջը Գիւղատնտեսութեան այս ճիւղին մէջ, բարեշրջման օրէնքին հաստատամիտ կողմնակիցներէն մէկն է. մինչդեռ իր պաշտօնակիցն ի Կրինօն, ոչ նուազ հռչակաւորն Սանսօն, հակառակորդն էր այդ վարդապետութեան: Թայեօն, Մօնթէլիէի բժշկ. համալսարանէն ալ ստացած է իր վկայականը և բժշկական աշխարհին մէջ ծանօթ է, անկանխահաս ժանտատենդի վրայ իր ըրած հետազօտութիւններով. մահն ընդհատեց յանկարծ զայն:

⁽⁵⁾ Ուսումնարանին Միւզէին և Մատեօ նաղարանին պետը և կազմակերպիչն է եղած երկար տարիներ. կարող հաշուադէտ և ճարտարապետ մըն էր. իր անմիջական հսկողութեան ներքեւ տեղի են ունեցան Ուսումնարանին բոլոր շինութիւնք. հողագործական գործիչներու ու արտադրած աշխատութիւնը չափելու համար գործածուած գործիքները բարեփոխած է շատ յաջող կերպիւ:

բոնցի, Ամերիկացի եւն.) մեծ տեղ մը կը գրաւէր և դեռ կը շարունակէ գրաւել:

Երբ 1890ին, Մօնթէլիէ քաղաքը, իր Համալսարանին վեցհարիւրամեակը տօնեց մեծ շքով, Հանրապետութեան նախագահը, Քառնո, պաշտօնապէս ընդունուեցաւ Ֆօնթըսի կողմէ, Հողագործական Ուսումնարանին մէջ: Պ. Տըվէլ, այն ատենուան երկրագործական նախարարը, ներկայացնելով Ֆօնթըսը և իր աշխատակիցները Հանրապետութեան նախագահին, ամենայն իրաւամբ կ'աւելցնէր սա խօսքերը. «Ահա՛ այն համեստ և անձնուէր գիտունները, որոնց շնորհիւ Գաղիոյ այգիներն սկսած են վերստանալ իրենց նախկին փայլուն վիճակը»:

Մօնթէլիէի հողագործական Ուսումնարանին նման մեծ Հաստատութեան մը պատճառած առօրեայ յոգնութիւնը, գիտական մշտաւե հետազոտութիւններ, երկարատե և յաճախակի ճամբորդութիւններ, հրապարակային դասախօսութիւնք, իր խուզարկութիւններն ի գիր առնելու համար գիշերային երկար հսկումներ, ուժգին կերպիւ խանգարեցին Ֆօնթըսի առողջութիւնը, հակառակ իր մարմնոյն առողջ կազմուածքին. բժշկաց ստիպմանը և իր ընտանեաց թախանձանացը չկարողանալով դիմադրել, 1898ին ստիպուեցաւ վերջնապէս թողուլ գիտական այն մեծ Հաստատութիւնը ուր քառորդ դար մը շարունակ դասախօսած, անդուլ և անդադար աշխատած, տքնած և հարիւրներով աշակերտներ էր հասուցած. — «Իր մեկնումի օրը մեզ ամէնուս համար սուգի օր մըն էր. այդ Հաստատութեան մէջ կը թողուր անջնջելի յիշատակն ասպարէզի մը որ ամբողջովին նուիրուած էր անոր մեծութեան ու համբաւին⁽¹⁾»:

Ֆօնթըս տարիներէ ի վեր իր այնքան գուրգուրանօք սիրած Հաստատութիւնը թողուլով, նախ՝ Այգեգործութեան և ի վերջոյ երկրագործութեան ընդհ. քննիչ անուանուեցաւ. բաղդատաբար աւելի քիչ յոգնութիւն պահանջող այս բարձր պաշտօններն ալ

Յ տարի անընդհատ վարեց մեծ հեղինակութեամբ, ի յայտ բերելով միշտ անվիճելի ձեռնհասութիւն և խորին հմտութիւն հողագործական ամէն խնդրոց քննութեանը մէջ:

Ֆօնթըս իր հեղինակ ալ մեծ արժէք ունի ոչ միայն Գաղիոյ, այլ և համայն Եւրոպիոյ մէջ. իր ամէնէն աւելի տարածուած գիրքը «Այգեգործութեան ուղեցոյց»ն է, որ 6 անգամ տպուած և այլեւայլ եւրոպական լեզուներու ալ թարգմանուած է, ամենուրեք մեծ ընդունելութիւն գտնելով. Ֆօնթըս տասնիչափ գրքեր եւ շատ մըն ալ պրակներ հրատարակած է այգեգործական և հողագործական խնդիրներու վրայ. իր ամէնէն կարեւոր հեղինակութիւնը «Ամբողջ դասընթացը Այգեգործութեան» անուն ընդարձակ երկն է⁽¹⁾, հազարէ աւելի էջերէ բաղկացած, շատ մը գունաւոր և սև պատկերներով, քարտէսներով զարդարուած, իրաւամբ գլուխ գործոց մը, որ հակառակ իր գնոյն սղութեան, հինգերորդ անգամ ըլլալով տպագրուեցաւ անցեալ տարի, միշտ աւելի ճոխացած՝ թէ՛ պատմականութեամբ և թէ՛ պատկերներով. Եւրոպիոյ բոլոր մասնագէտներուն միաձայն հաւանութեամբը, եզական աշխատութիւն մը համարուած է:

Նշանաւոր հողագէտ հանգուցեալ Պարալի սկսած և Սաների վերջացուցած հողագործական հոյակապ և քառահատոր բառարանին մէջ այգեբանութեան և այգեգործութեան վերաբերեալ բոլոր յօդուածք, կ. Ֆօնթըսի ստորագրութիւնը կը կրեն:

Ի նշան իր արժանեաց և թանկագին ծառայութեանց, Գաղիոյ կառավարութիւնը պատուած էր զինքը Պատուոյ Լէգէոնի սպայութեան, Երկրագ. Արժանեաց հրամանատարութեան եւ Կրթութեան Ասպետի պատուանշաններով: 1896ին Գաղիոյ հողագ. ագգային Կաճառը թղթակից անդամի տիտղոս

(1) Դամբանական Պ. Ֆէրուլեաի, Տնօրէն Մօնթէլիէի Հողագործական Ուսումնարանին:

(1) 1900ին, Հիւսէյին Քեազիմ պէյի «Այգեգետանաց միջեւ» (Պաղլար արասընտա) անուան տակ հրատարակած գիրքը, բաւական յաջողուած համառօտութիւնն է այս գործոյն:

էր տուած իրեն. Եւրոպիոյ բոլոր այգեգործ երկիրներու. կառավարութիւնք եւ, ի նշան գնահատութեան եւ համակրանաց, շնորհած էին իրեն, զանազան աստիճանի պատուանշաններ: Մեր վեհափառ կայսրն ալ բարեհաճած էր պատուել զինքը Մէճիտէի Գ. աստիճանի պատուանշանով:

Իր բազմաթիւ աշակերտներէն, Բ. վրալա, Ռավազ, Ռուժիէ, Կիյեօ, Մազատ, ծանօթ դէմքեր են Գաղիոյ մէջ, այգեբանութեան մէջ իրենց ունեցած բազմակողմանի հմտութեամբը եւ մեծ ձեռնհասութեամբը:

Իբր քաղաքացի, իբր մարդ, իբր ընտանեաց հայր, Ֆօէքս ոչ նուազ համարում կը վայելէր իր ապրած միջավայրին մէջ. 70ի պատերազմին մէջ իբր տեղակալ՝ պատերազմած էր արիաբար, պահելով իր զինուորականի զիրքը՝ պահեստի բանակին մէջ, մինչ 1883. համեստ եւ խիստ զիւրամատչելի բնաւորութեան մը կը կցէր, ամէնուն ծառայութիւն մատուցանելու պատրաստկանութիւն մը, ինչ որ ճշմարիտ գիտունի մը յատկանիշն է ամենուրեք: Իր բազմաթիւ աշակերտներն անխտիր կը վայելէին իր աջակցութիւնը. մեզի այնպէս կը թուէր թէ, օտարազգի ուսանողներն ա'լ աւելին պատաստւորեալ էին այս մասին. ինքը մեր ամէնուս համար պատուական հայր մըն էր, մեր ուսանողութեան շրջանին մէջ պատահած խոչընդոտները վանելու համար չէր խնայէր ո'չ ջանք եւ ոչ ալ ի հարկին նիւթական զոհութիւն. բարի էր բառին բուն նշանակութեամբ. միշտ օգնող, միշտ քաջալերող, աօրթ կը փնտռէր մեզ օգտակար հանդիսանալու, իր գիտութենէն, իր անսպառ փորձառութենէն՝ մաս հանելու իր աշակերտաց. մեզի համար ամէնէն մեծ պատիւը, իր ընտանեկան սեղանին երբեմն մասնակից ըլլալնիս էր, այդ ժամերուն մէջ մանաւանդ խիստ մտերիմ էր Ֆօէքս եւ իր խօսակցութիւնք կը դառնային գրեթէ միշտ այգեգործութեան վերաբերեալ այլ եւ այլ խնդիրներու վրայ. իր պատուական կիներն ալ անմասն չէր մնար այդ խօսակցութիւններէն. այր եւ կին լաւ կը յիշէին Ուսումնարանին բոլոր նախկին օրերը, գաղիացի

թէ օտարազգի. անոնց օրրստօրէական յառաջդիմութիւնը մեծապէս կը հետաքրքրէր զիրենք. խիստ ուրախ կ'ըլլային երբ իմանային անոնց յաջողութիւններն, անհատուժ հարցեր կ'ընէին մեր բնավայրերուն հողագործութեանը վրայ. Ֆօէքս իր սուր դիտողութիւններով սխալներ կը մատնանշէր, ուղիղ ճամբան կը գծէր: Ընտանեկան այդ համեստ եւ մաքուր յարկին տակ տեղի ունեցած այդ հացկերոյթները տեսակ մը դասաւանդութեան պատրուակ կը դառնային իրեն համար. գոհ եւ զուարթ հրաժեշտ կուտայինք իրենց, անհամբեր սպասելով կրկին իրենց սեղանակից ըլլալու նմանօրինակ հրաւերի մը:

Ուսումնարանին նախկին ուսանողաց Մարմնոյն իբր պատուոյ նախագահ, իր բազմազբաղ պաշտօնին մէջ միջոց կը գտնէր իր ներկայութեամբը պատուելու այդ Մարմնոյն գումարումները. տարին մէկ անգամ սարքուած այդ ուսանողական հացկերոյթին մէջ, գուրգուրուած կը շրջապատէինք զինքը եւ մեր հողագործական աշխատութեան ապագայ ծրագիրները պարզելով իրեն, ուսումնարանական շրջանէն դուրս ալ միշտ իր աջակցութիւնը վայելելու բաղձն ու պատիւը կը խնդրէինք իրմէ:

1890ին, Էրէնքէօյի այգեգործական կայանին գիտական պիտոյքը հայթայթելու համար, Մոնթէլիէ երթալով՝ զինքը կրկին տեսնելու բաղձին արժանացայ. ամբողջ շաբաթ մը հիւրնկալեց զիս, շնորհելով ինձ միանգամայն ազատ մուտք իր հռչակաւոր աշխատանոցին մէջ:

Ինչպէս ըսինք, պատուական հայր մը եւ բարի քաղաքացի մըն էր մեր նախորդ Տնօրէնը. կը գուրգուրար իր զաւակներուն վրայ, ամէն կիրակի առաւօտ, ամառ թէ ձմեռ, իր ընտանեաց բոլոր անդամները կը հաւաքէր իր պատմական հանրակառքին մէջ եւ կ'երթար ժողովարան, ուր յաճախ առաջնորդ կ'ըլլար աղօթից եւ ծիսական պաշտամանց. Աւետարանական եկեղեցւոյ ճշմարիտ պաշտօնէի մը նման կը սիրէր Աստուածաշունչը, զոր շաբաթը գէթ մէկ անգամ գոնէ ձեռքէն չէր

թողութիւն, տուանց սակայն կրօնամուլ մ'ըլլա-
լու :

Իր կանխահաս և անակնկալ մահը
գուժող մահադէին վրայ գրուած սա

«Զընթացան կատարեցի

«Զհաւատան պահեցի»

առաքելական խօսքերը բնաբան առնելով՝
պերճախօս դամբանականներ խօսեցան , Ա-
ւետար . եկեղեցւոյ երկու արթուն հովիւներ .
մեր երբեմնի օգնական-ուսուցիչն ու բարե-
կամը , Ուսումնարանին այժմու երիտասարդ
Տնօրէնը՝ Պ . Ֆէրրուլիա , յուզեալ շեշտերով
վերջին հրաժեշտի խօսքեր արտասանեց .
նոյն հաստատութեան մէջ Այգեբաճութեան
ուսուցիչ Պ . Ռափաէլ , Ֆօէքսի մէկ ուրիշ
փայլուն աշակերտն ու մեր ընկերակիցը ,
անոր մատուցած բազմաթիւ ծառայութիւն-
ները թուեց համառօտիւ . Երկրագործական
քննիչ Պ . Պրէհէրէ , անոր երբեմնի օգնականը
և ի վերջոյ պաշտօնակիցը , յանուն քննիչ
մարմնոյն , յուզեալ խօսքերով հրաժեշտ ա-
ռաւ այն դաժադէն ուր փառաւոր ասպարէզէ
մը վերջը , յաւիտեանական քունը կը քնանար
Այգեբաճութեան և Այգեբաճութեան մեծ
վարպետը :

Այդ նոր գոցուած գերեզմանին առջև ,
մենք ևս ծնրադիր կը խոնարհինք ամենայն
յարգանօք և յանուն մեր Թուրքիացի ըն-
կերներուն ինչպէս նաև մեր այգեգործ դա-
սուն , յայտնելով վշտի մեր ամենաջերմ և
անկեղծ զգացումներն առ իր վշտալից և
աղբիւ տիկինը , առ իր սգակիր ընտանիքն ,
կ'ապահովենք իր որդին և մեր դեռատի
ընկերակիցը Պ . Էթիէն Ֆօէքսը թէ իր պաշ-
տելի և պատուական հօր յիշատակն յաւէտ
անջինջ և անմոռանալի պիտի մնայ մեր այ-
գեգործ դասուն մէջ ալ :

Ն . Գ . ԳԱԼՖԱՅԵԱՆ

ՆԱԽԻԿՆ ՏՆՕՐԷՆ

Կայս . Երկրագործական Վարժարանին

Պրուսայի

ՀԱՅՈՒՂԵԱՅ ՎԱՐՇԱՐԱՆ ԱՏԱՐՈՉԱՐ

Այս վարժարանը , զոր կը վարեն ինն
անդամներէ բաղկացած ինամակալութիւն

մը , և բնիկ ու Ամերիկացի 11 ուսուցիչներէ
կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը ,
հիմնական դաստիարակութիւն մը կուտայ
բոլոր իրեն դիմող հայ աղջիկներուն : Կ'ա-
ւանդուին բնական , իմաստասիրական , չա-
փական և այլ գիտութիւններ : Մասնաւոր
ոյժ կը տրուի հայերէն և անգլ . լեզուներ-
ուն . Կ'ուսուցցուին նաև թուրքերէն և ֆը-
րանսերէն լեզուները : Վարժարանին երկու
ընդարձակ և օդաւէտ շէնքերը , ինչպէս նաև
խնամակալութեան երկու բժիշկ անդամները
մեծապէս կ'ապահովեն աշակերտուհիներուն
առողջութիւնը : Անատուրի երկաթուղին ,
որուն մէկ մասնագիծը մինչև քաղաքս կ'եր-
կարի , ճամբորդութիւնը խիստ դիւրին եւ
հաճելի կ'ընծայէ : Գիշերօթիկներու տարե-
թոշակն է 12 օսմ . ոսկի , զոր երկու մասնա-
վճարով պէտք է հատուցանել : Դաշնակի
դասի համար 5 կամ 3 ոսկի կը պահանջուի ,
դասառութեան թիւին համեմատ : Երգեհոնի
դասի համար 2½ ոսկի կը պահանջուի : Վար-
ժարանին իւր . տարեջրանը կըսկսի Սեպտ .
12 (Ն . Տ .) Դ . իրիկունը :

Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր .
Բիդի , Պայպըլ Հաուս , Կ . Պոլիս , կամ
գրել Տօքթ . Ս . Էֆ . Գափալճեանի , Ատենա-
պետ ինամակալութեան , Ատաբաղար :

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՕԼԷՃ ԱՂԶԿԱՆՑ

Ս Կ Ի Ի Տ Ա Ր

Վարժարանիս վերամուտը տեղի պիտի
ունենայ սեպտ . 14ին : Գիշերօթիկները կը
սպասուին 13ին :

Գոյէճն այս տարի տեղւոյ անձկութեան
պատճառով պիտի չընդունի 14 տարեկանէ
վար աշակերտուհիներ : Սակայն ուսումնա-
րանի չորս կարգերու և նախապատրաստական
բարձրագոյն երեք կարգերու աշակերտու-
հիներուն ամէն կերպով պիտի ընծայէ և ,
եթէ հնար ըլլայ , պիտի աւելցնէ ալ սովո-
րական դիւրութիւնները : Այս եօթը կար-
գերու աշակերտուհիներուն թիւը պիտի
չգեղձուի , և ըստ սովորականին մասնաւոր
աշակերտուհիներ պիտի ընդունուին գոյէճին
մէջ :

Հիմնադիր—Կ . Ս . ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տէր եւ Տօրեկ—ՏՈՔԹ . ԵԴՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի

ՍԱՆՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ի ԿԱՐԻՆ

Սանսարեան վարժարանն իր 26 դասերէն շօնին առթիւ նոր եւ լաւագոյն կարգադրութիւններով պատկերաբար լատինիայ սեպտեմբեր 1ին:

Վարժարանն իր ճարգութիւնը կը կառուցաւ սանսարեան գիւմաստիան միջնակարգ վարժարաններուն (Realschule), եւ ունի մէկ նախապատրաստական եւ վեց վարժարանային դասարան, իւրաքանչիւրը մէկ տարուան բնթանքով:

Թշուաւոր գիշերօթիկ եւ ցերեկեա, աշակերտներու ընդունելութեան պայմաններն են.

1. Նախապատրաստական դասարան մէջ ընդունուելիք աշակերտք պէտք է ուրիշ 10-11 տարեկան ունի եւ առողջ եւ կարենայ հաւերին վարժ կարգաւ, ընթեանի կերպով գիւլ. ցերեկային «Մասունք բախին» գրեմայ, ուղղագրել, տառեր խօշոր թուրներու եւ թուարեան կան չոյս գործողութիւնները վարժ կերպով կատարել:

2. Վերին դասարաններէն որ եւ է մէկին մէջ ընդունուելի ուղղա ուսկէրայ պարտի յառուկ քննութիւն տալ վարժարանին ուսուցչական մայմնայն առջեւ:

3. Վարժարանն ընդունուելիք ամէն աշակերտ պարտի ներկայացնել իր ծննդեան, մկրտութեան եւ պատւաստի վկայականները, ինչպէս նաեւ օսմանիւ թեզ քերտիսն եւ ըլլալ քաղաքացի:

Վասնդուար եւ տարափոխիկ հիւանդութիւն ունեցողները եւ կը դարձուին:

4. Վարժարանն թաշակուար գիշերօթիկ աշակերտներու ընդունելութեան համար ետեւ տեսնի պայման ունի:

Ա. Պէտք է վճարել միանուագ մուտք իրա օսմ. 3 + Տարեթուակ լիւրա օսմ. 20 + Առնակուրդի ծախք լիւրա օսմ. 1 = 24 լիւրա օսմ. ուրաղ ծախքը վարժարանին վայ. եւ համար. Տարեթուակ լիւրա օսմ. 12 + Առնակուրդի ծախք լիւրա օսմ. 1 = 13 լիւրա օսմ. Այս երկ-

տորդ պարագայի՝ աշակերտայ ծնողք կը հաշուն իշենց զաւակաց զգեալի, հօշիւի, կարկառանքի, դասագրայ եւ դրպ. օրացան ալ պիտայր, մանկակայի եւ անկողնայ. ինչպէս նաեւ դեղօւնիք ծախքը իսկ վարժարանը կաւառ, անուշիկ եւ ուսում եւ կը հագայ լուարքի, բաշխիքի եւ սովորական բժշկի ծախքերը:

5. Ի քաջանչիւս նորեկ գիշերօթիկ աշակերտ քաղաքի վարժարանին առկաքն լանձնել նաեւ 3 օսմ. սոկի պահեստի գումար մը, իր իր ճանապարհածախները ընթացաւարա ըլլալ եւ համար եւ է պատճառաւ վարժարանին արձակուի:

6. Նախապատրաստական Ա. եւ Բ. դասարաններու ցերեկեայ աշակերտները երբ տալեթուակ պատանի մձայնի 6 օսմ. սոկի, իսկ Գ. Դ. Ե. եւ Զ. դասարաններու աշակերտները 7 օսմ. սոկի: Այս գումարները կը պարունակեն մի միայն ուսման եւ ցերեկային ճաշի ծախքերը:

7. Այն աշակերտները, որոնք ուղին ուսմանի կամաւոր տառախներէն (դաշնակ, ջութակ) մէկը, պարտին տար համար մձայնի պատանի 3 օսմ. սոկի, որ կը պարունակէ ուսուցչի եւ դաշնակի ծախքը:

8. Ամէն նորեկ աշակերտ վարժարան մտած պ հաշն պարտի Տեսչութեան ներկայացնել իր ման եւ տարեթուակի ընկալագրերը, հոգաւանկ պարագային չընդունուի. իսկ արդէն վարժարանին մէջ գտնուողներէն անոնք, որ մեկեւ լատինիայ սեպտ. 15 անվճար թաղուն իսկենց տալեթուակները, եւ կը ճամբուին:

Մանրամասն տեղեկութեանց համար դիմել ի Պոյսա, Ազգային Պատրիարքարան համար կարին վարժարանին Տեսչութեան:



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՂ. ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուկրաինայի արտոնում

Կեդրոնատեղին Քեդերսպուրկ, իրեն յատուկ չէնք

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունէ
ՀՐԴԵՂԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾՆԵՐՈՒ ԴԵՄ,

ինչպէս նաեւ ՀԱՅԵՂԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կատարելուն դէմ:

Ընկերութեան դրամադրուիւր, ամբողջապէս վճարուած	10,666,666	Փրանք
Երաշխաւորութեան գումար աւելի քան	149,852,000	*

Ընկերութեան ապահովագրուողներուն վճարուած դրամա- դրուիւր եւ վնասուց հատուցում	355,840,000	»
---	-------------	---

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տուրոս	64,553,800	»
--	------------	---

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան
խան, Վոյվատա, Ղալաթիա, 2-10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հ Է Ր Ճ Ա Յ Ի



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Հերձայի վաճառատնը՝ զգուշացնելով, որ քանի որ արժանի չլինողներու, գրգռեալ
պատի եւ քոնսոյի ժամ արդեաւ մասնաւոր վաճառուիչն զատ, իր բազմաթիւ լաւագործ
խորդներուն վաճառութեան քաջալերութեամբ՝ այս անգամ կը փութայ յայտարարել թէ ա-
մէն եղանակի յառուկ Կ Ր Ճ Ա Յ Ի նորաձեւութեան վառ պատասխաններ տալու. Կանանց
եւ աղայոց համար ամէն տեսակ հագուածներու անձեւի համար մուշակաւ վաճառեալ-
ներ, նաեւ ճերմակեղէն, ֆաթեղէններ եւ թագֆեղէններ ու ամերիկեան կոշիկներ: Ունի
նաեւ կակարանի, ձեղունի լամբաներ, մանձալարներ, երազակաւ ու անգլիական գոր-
գեր, գեանի մուշակաւներ, կրամոֆոններ ու պիսիքէթներ՝ ամենավերջին կատարելու-
թիւններով:

Հերձայի վաճառատնը իրականապէս ու լաւօրէն շուած է հանրութեան
վաճառութիւնը եւ զգուշացնելով իր ապրանքներուն աւելուածներն եւ անկներուն
մաքրութեան, ձեւաւորութեան եւ ամենալաւ համար:

Այս ամէնուն որոյեալ արժէքին վաճառումն է

ՄԱՐԿԱ ՄԱՐԿԱ ՄԱՐԿԱ

Միւսի թէ գնումն ապրանքին հարկերին 20ը հաշիւի. իսկ Յնացեալ գումարին հա-
մար շարքակաւ հարկերին 5 վճարմամբ պատրաստ է հայթաթել:

Վաճառատնն հաստատում է

ՄԵՄ-ՇՈՒԿԱՅ, ՈՍԿԵՐՉԿՑ ՄԵՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

Անգամ մը այլեւի բաւական է համազուելու համար թէ՛ Հերձայի անպակի կող-
մակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գնումն իր ամէնէն շատագոյն լաւագործները:

Կաթիսի զնաղներու ցամաք հարկերին 5 գեղջ:

Սակարկութիւն չկայ:

Զարթոյն վաճառանք համար հաւաքելներ միւս պատրաստ են:

ՆԱԶԱՐԷԹ ԻՍՁԵՐԵԱՆ

Փ.Ա.ՍՏԱՐԱՆ

Պոլիս, Մարտինոսյան, Պարնաթան խան
Թիւ 26

Այն կորգի դասեր կը ստանձնէ եւ խնդրոյ առարկայ եղած դասերու համար թէ՛ բերանայի եւ թէ՛ թշնամեցնուած բանակցութիւններ կը կատարէ եւ կործիք կը յայտնէ. կը խմբագրէ եւ կը թարգմանէ դասերու եւ առեւտրական ու սովորական պայմանագրութեանց վերաբերող թուղթեր. Ուրբաթ օրերը մինչեւ կէս օր ձիաբար խորհրդակցութիւն կը կատարէ եւ կործիք կը յայտնէ:

Ապահովագրական գործառնութիւններու եւ ի մասնաւորի կեանքի ապահովագրական ընկերութեանց նկատմամբ տնկարժեշտ եղող տեղեկութիւնները ձեռքբար կուտայ:

Կը յանձնարարէ որ մինչեւ օրայն մասին հարեւոր եղած տեղեկութիւնները իրմէ հասցունին, ապահովագրութիւն չի ստորագրուի. Ապահովագրական վիճարկ հասուցման գուշմարենբու եւ փխարժիքներու գումարման հեր կը ստանձնէ:

9-10

ԴԵՐՁԱԿ

ՎԻՉԵՆ ԱԼԱՃԱՍԱՆ

Ղալաթիա, Հարանք փողոց, քիւ 13

Հաւ տեղակի կեպտաներով ու ձեռաւոր օգնական պատրաստել աւել ռազմային, բարձր միանգամայն ռազմութիւն կը փնտռեն եւ վճարման դիւրին պայմաններ, կը բնան դիմել աւել քան բացառած խանութք, եւ մեծապէս դուրս գործի մնան:

9-10

PHOENIX ASSURANCE Ld. Co

“ՖԻՆԻՔՍ”



ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՆԸՈՆ 1782 ԻՆ

ՊԵ ՊՈՐՏԻ Ի ՊՈՒԼԻՍ 1869ԻՆ Ի ՎԵՐ

ԱՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ եւ պահեստի դրամ

Անգլ. ոսկի 4,218,000

ՖԻՆԻՔՍ առկ հրդեհի դէմ Ապահ.

Վաճարական Ընկերութիւն մըն է, ծանօթ իր պատուաւորութեամբ եւ վստահ մէջ իր տնտեսական վճարումներով:

ՖԻՆԻՔՍ Կ'ապահովագրէ հրդեհի եւ կայծակի դէմ տնէն տնակ տնչործ եւ շարժուն ստացուածք, յոյժ նպատակաւ պայմաններով:

Ընկերութեան նյութաբանէ եղած է.

ՈՒՂՂԱՍՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ. Ցաւդ վճարած է առաւել քան 27,000,000 տնգլ. տոկոս:

Ընդհ. դարձակալ Պոլսոյ եւ դաւաւաց:

Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վերալիս խան, Պանգ Օբումանի մօտ Ղալաթիա:

Փոխ դարձակալ ի Պոլսոյ

ՃԻՎԱՆ ԹԵՔԵՆԱՆ

2-10

Ֆինգլիան խան

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ՌԵՐԱ, ՄԵՍ ՓՈՂՈՅ ԹԻՒ 200


Կալաթա-Սերայի Լիսէին դէմ

Գ. Ե. Շ. օրերը առաւօտեան կ'անու.

խեն մինչեւ իրիկուան ժ. 11½

Բ. Գ. Ուր. օրերը 6հն մինչեւ 11½

Կիրակի օրերը ժամադրութեամբ 2-10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարճ մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռ էի, ուռի ու ուռի եւ ձեռքի սխաւգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՆԱԲԱԼԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐԱ

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՏԱՐ

Զարը Պօլու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ երաւիաւորութիւն:

Մասնահիւղեր գաւառաց բոլոր ֆաղափներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը: 2—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՍ ՓՈՂՈՑ, ԹԻՒ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ դէռ, մասնագիտօրէն եւ երկար օրերէն ի վեր կը դարձանէ օտոմօքսի, աղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, ջղային աղբուրութիւնները, հին եւ նոր գլխաւոր խտերը: Այս վերջին խտերը՝ առանց օտոմօքսի խտագործան եւ նորագործ մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ քիւրլը, Զօրիօրթի օրերը միայն ձրի: 1—10

Զ. Տ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆԻ երկու կարեւոր հրատարակութիւնները. — Դորձնական Բաւարան (հայերէն անգլիէրէն) որ կը պարունակէ 40,000է աւելի բառեր, ասութիւններ եւ ոճեր: — Գին լաթակաղմին՝ 35 ջրը: — Նոյն հեղինակէն Զորիօրթուեան խօսակցութիւն (հայ., գաղղ., անգլ., գերմ.) բաժնուած երեք մասերու, բառագիտութիւն, խօսակցութիւններ, նամականի: — Գին լաթակաղմին՝ 12 ջրը: — Վարժարանաց համար մասնաւոր զեղչ: 7—10

Սինկէրի զեղարուեստական կրդ Յուցահանդէսը բացուած է Բերայի բնդհ. Տնօրէնութեան սրահներուն մէջ, Պօն-Մարէի դիմաց: Յուցահանդէսը ամէն օր բաց է եւ ուտքը ազատ: 8—10